*ՆԱԽԱԳԻԾ*

# *ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ*

# *Ո Ր Ո Շ Ո Ւ Մ*

«___» _____ 2020 թ. N _____-Ն

ք.Ստեփանակերտ

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Ղեկավարվելով Արցախի Հանրապետության Նախագահի 2017 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-108-Ն հրամանագրով սահմանված կարգի 3-րդ և 5-րդ կետերով՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***ո ր ո շ ու մ է.***

1. Հաստատել Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր)՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Ծրագրի կատարման հսկողությունը վերապահվում է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը (այսուհետ՝ Նախարարություն).

2) Ծրագրի շրջանակներում իրականացվող միջոցառումների պատասխանատու են հանդիսանում Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերը.

3) Նախարարությունը տնտեսական տարին ավարտելուց հետո՝ եռամսյա ժամկետում Արցախի Հանրապետության կառավարություն է ներկայացնում հաշվետվություն՝ կատարած աշխատանքների և իրականացրած միջոցառումների մասին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից, իսկ ցանկապատված պոլիէթիլենային հիդրոմեկուսիչ ծածկոցով ջրավազանների վերաբերյալ դրույթները՝ 2021 թվականի հունվարի 1-ից:

Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 16-րդ կետով նախատեսված ժամկետը 2020 թվականի համար սահմանել մինչև նոյեմբերի 30-ը:

***«Հաստատում եմ»***

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱԳԱՀ***

***Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***

## ՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԹԵՐԹ
## ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՀԱՄԱՁԱՅՆԵՑՎԱԾ Է՝

| Հ/Հ | ՇԱՀԱԳՐԳԻՌ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆԸ | ՂԵԿԱՎԱՐԻ ԱԶԳԱՆՈՒՆԸ | ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ | ԹՎԱԳՐՈՒՄԸ |
|---|---|---|---|---|
| 1. | ԱՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ | | |
| 2. | ԱՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ | Վ. ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ | | |
| 3. | ԱՀ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ | Ֆ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ | | |
| 4. | ԱՀ ԿԱԴԱՍՏՐԻ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ | Կ. ՇԱՀՐԱՄԱՆՅԱՆ | | |
| 5. | ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ | Ա. ԼԱՉԱՐՅԱՆ | | |

*Առաջարկությունները և առարկությունները՝*_____

_____

_____

_____

_____

_____

_____

*Նախագիծը ներկայացնողը՝*
*ԱՀ գյուղատնտեսության նախարար* *Ա. Բախչիյան*

«____» _____ 2020 թ.

Հավելված
Արցախի Հանրապետության կառավարության
2020 թվականի _____ ___-ի
N ____ -Ն որոշման

***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ***
***ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ***

# ***ԾՐԱԳԻՐ***
# ***ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ***

***ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ - 2020 ԹՎԱԿԱՆ***

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ (ԱՅՍՈՒՀԵՏ՝ ԾՐԱԳԻՐ) ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ

II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ

IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

## *I. ԾՐԱԳՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ*

1. Երկրում գյուղատնտեսական մթերքների արտադրությունը բարձր մակարդակի հասցնելու և մթերքների առատություն ստեղծելու գործում կարևոր նշանակություն ունի գյուղատնտեսության վարման գիտականորեն հիմնավորված համալիր միջոցառումների մշակումը:

2. Գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման, ոռոգման ջրի և ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման գործում կարևոր նշանակություն ունի ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը, ջրման նոր տեխնոլոգիաների ներդրումը, զարգացած և հուսալի համակարգերի ստեղծումը:

3. Բազմաթիվ դիմումների, ուսումնասիրությունների և հետազոտությունների վերլուծությունները ցույց են տալիս, որ հողօգտագործողների անհատական ոռոգման համակարգերի զարգացումը հնարավոր է ապահովել պետության կողմից մասնակի սուբսիդավորման ծրագրերի իրականացման միջոցով:

4. Ոռոգման կաթիլային եղանակի կիրառությունն ունի այնպիսի առավելություններ, ինչպիսիք են՝ 30-60 տոկոսով ոռոգման ջրի տնտեսում, 20-50 տոկոսով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացում և ստացվող բերքի որակի բարձրացում, մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազում: Ոռոգման կաթիլային համակարգերը հնարավոր է կիրառել մեծ թեքությամբ, բարդ ռելիեֆ ունեցող ցանկացած տեղանքում: Լիովին բացառվում է հողի իռիգացիոն էրոզիայի վտանգը, մակերեսը չի կեղևակալում, մնում է փխրուն, գրունտային ջրերի մակարդակը մնում է անփոփոխ, հնարավորություն է ստեղծվում ավտոմատացնել ջրաբաշխման և ջրման գործընթացները: Ջրման այս եղանակը կարող է ապահովել մեծ եկամտաբերություն և կարճ ժամանակահատվածում (երկուսից երեք տարի) արդարացնել ներդրումները:

5. Անձրևացման գլխավոր տարբերիչ առանձնահատկությունն այն է, որ տեղի է ունենում ոչ միայն հողի, այլև գետնամերձ օդի շերտի խոնավացում, ինչի շնորհիվ նվազում է գոլորշիացումը հողի և բույսի մակերեսից: Միևնույն ժամանակ առկա են որոշակի թերություններ, օրինակ՝ քամու մեծ արագության դեպքում հնարավոր չէ կատարել անձրևացում, և անձրևացման համակարգը ոչ բոլոր գյուղատնտեսական մշակաբույսերի համար է նպատակահարմար:

6. Սույն ծրագրի իմաստով օգտագործվող հասկացություններն են՝

***1) արտեզյան խորքային հոր՝*** 60-ից 150 մետր խորությամբ նվազագույնը 6,94 լ/վ ջրթողունակությամբ հիդրոտեխնիկական կառույց.

***2) բազմամյա տնկարկ՝*** այգիները, անկախ նրանց տարիքից, այդ թվում՝ պտղա-հատապտղային տնկարկների բոլոր տեսակները (ծառեր և թփեր).

***3) ոռոգման անձրևացման համակարգ՝*** ստացիոնար (ինքնագնաց հենարաններ չունեցող անձրևացման տեղակայանքներ, որի ժամանակ ջուրը ճնշումային ոռոգման փակ ցանցից տրվում է անձրևացման սարքերին) և շարժական (ինքնագնաց հենարաններից, պոմպային ագրեգատից և անձրևացնող սարքերից կազմված անձրևացնող ագրեգատներ կամ ինքնագնաց հենարաններից և անձրևացնող սարքերից կազմված անձրևացնող մեքենաներ) ոռոգման համակարգեր.

***4) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա***՝ ոռոգման կաթիլային, ենթահողային, շիթային և անձրևացման համակարգեր.

***5) տնկարանային տնտեսություն***՝ տնկանյութի, տնկիների ստեղծման տնտեսություն, որում հատուկ բարենպաստ պայմաններում բազմացնում, աճեցնում և կոփում են բազմամյա բույսերը, դրանց հասցնելով այգում տնկվելու զորության մակարդակի:

7. Ծրագրով ներկայացվում են Արցախի Հանրապետությունում ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման, արտեզյան խորքային հորերի, ցանկապատված պոլիէթիլենային հիդրոմեկուսիչ ծածկոցով ջրավազանների կառուցման աջակցմանն ուղղված միջոցառումները և ակնկալվող արդյունքները:

## *II. ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ*

8. Ծրագրի նպատակն է ապահովել Արցախի Հանրապետությունում տարբեր մշակաբույսերի ցանքատարածությունների ու համախառն բերքի ծավալների ավելացումը և նպաստել գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակի բարձրացմանը:

9. Ծրագրի խնդիրներն են՝

1) ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործումը և անցումը ինտենսիվ գյուղատնտեսության.

2) հողի արդյունավետ մշակման մակարդակի ապահովումը.

3) գյուղատնտեսական արտադրության զարգացումը.

4) նվազ ֆինանսական միջոցներով համակարգի արդյունավետ կառավարման բարձրացումը.

5) ոռոգելի հողատարածքների ջրապահովվածության բարձրացումը:

## *III. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄԸ*

10. Ծրագրով նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.

2) արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքների արժեքի մասնակի սուբսիդավորում.

3) ցանկապատված պոլիէթիլենային հիդրոմեկուսիչ ծածկոցով ջրավազանների կառուցման աշխատանքների արժեքի մասնակի սուբսիդավորում:

11. Սույն Ծրագրի շրջանակներում պետական աջակցությունը կտրամադրվի այն անձանց, որոնք չունեն գյուղատնտեսության ոլորտում ծագած հարաբերություններից բխող նախորդ տարիներից կուտակված չմարված պարտավորություններ (հողի հարկ, վարձավճար, մատակարարված ոռոգման ջրի դիմաց պարտք, Արցախի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի (այսուհետ՝ հիմնադրամ) հանդեպ ժամկետանց պարտքեր), որը հավաստվում է համապատասխան փաստաթղթերով:

12. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) համակարգում և վերահսկում է ծրագրի իրականացման գործընթացը:

13. Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով ծխախոտի, բանջարեղենի, այլ միամյա մշակաբույսերի մշակությամբ և տնկարանային տնտեսությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողները մինչև ընթացիկ տարվա սեպտեմբերի 31-ը տեղական ինքնակառավարման մարմիններին, իսկ Ստեփանակերտ քաղաքում՝ Նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 1 ձևի՝ կցելով գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականների (այսուհետ՝ Վկայական), իսկ վերաբնակեցման տարածքներում Վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Տեղական ինքնակառավարման մարմիններն ընդհանրացնում և շրջանների վարչակազմեր են ներկայացնում իրենց կողմից հաստատված տեղեկանք՝ նշելով հողօգտագործողի անունը, ազգանունը, հայրանունը, անձնագրային տվյալները, վկայականի համարը և դրանց մշակության համար նախատեսված տարածքների մակերեսները՝ կցելով նաև հայտերի, վկայականի կամ համապատասխան տեղեկանքի պատճենները:

Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող գյուղատնտեսական նշանակության տարածքների վարձակալները, ենթավարձակալները փաստաթղթերը ներկայացնում են համապատասխան շրջանի վարչակազմի աշխատակազմի գյուղատնտեսության բաժին:

14. Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու ցանկություն ունեցող հողօգտագործողները մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 31-ը հայտերը ներկայացնում են Նախարարություն՝ համաձայն N 2 ձևի՝ նշելով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման հնարավորությունները և պայմանները, կցելով համայնքի ղեկավարի կամ համայնքի գյուղատնտեսի՝ նոր հիմնադրվող բազմամյա տնկարկի դեպքում՝ բազմամյա տնկարկների մշակություն իրականացնելու թույլտվությունը, արդեն հիմնադրված բազմամյա տնկարկի դեպքում՝ տնկիների տարիքի և վիճակի վերաբերյալ տեղեկություն (համայքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողամասի պարագայում տեղեկանքը տրամադրվում է համապատասխան շրջանի գյուղատնտեսության բաժինը), Վկայականի, իսկ վերաբնակեցման տարածքներում Վկայականի բացակայության դեպքում՝ համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

Մեկ ամբողջություն կազմող միավոր տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողատարածքի նկատմամբ մի քանի անձանց (բացառությամբ փոխկապակցված անձանց՝ ծնող, ամուսին, զավակ, եղբայր, քույր, ամուսնու ծնող, զավակ, եղբայր և քույր) գույքային իրավունքների առկայության պայմաններում, ոռոգման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակությամբ զբաղվելու համար

տրամադրվող պետական աջակցությունից այդ անձինք կարող են օգտվել գյուղատնտեսական կոոպերատիվ հիմնադրելու դեպքում:

15. Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայով տնկարանային տնտեսությունների, բազմամյա տնկարկների մշակության, ինչպես նաև անձրևացման ստացիոնար համակարգերի տեղադրման դեպքում անհատույց օգտագործման իրավունքի պետական գրանցման վկայականի գործողության ժամկետը չի կարող պակաս լինել եռակողմ պայմանագրի գործողության ժամկետից:

16. Արտեզյան խորքային հորերի կառուցման ցանկություն ունեցող հողօգտագործողները մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 31-ը հայտերը ներկայացնում են Նախարարություն՝ համաձայն N 3 ձևի՝ կցելով արտեզյան խորքային հորի հորատման վերաբերյալ բնապահպանության բնագավառում լիազոր մարմնի կողմից տրված թույլտվությունը (արտեզյան խորքային հորի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին անցնելու դեպքում), տվյալ հողատարածքի այլ եղանակով ոռոգման հնարավորության բացակայության կամ համակարգի առկայության դեպքում ոռոգման համար անհրաժեշտ քանակի ջրի բացակայության վերաբերյալ ջրային համակարգերը շահագործող ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կողմից տրված եզրակացությունը, Վկայականի, իսկ վերաբնակեցման տարածքներում Վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

17. Ցանկապատված պոլիէթիլենային հիդրոմեկուսիչ ծածկոցով ջրավազանների կառուցման ցանկություն ունեցող հողօգտագործողները մինչև ընթացիկ տարվա հոկտեմբերի 31-ը հայտերը ներկայացնում են Նախարարություն՝ համաձայն N 4 ձևի՝ կցելով տվյալ հողատարածքի այլ եղանակով ոռոգման հնարավորության բացակայության կամ համակարգի առկայության դեպքում ոռոգման համար անհրաժեշտ քանակի ջրի բացակայության վերաբերյալ Ընկերության կողմից տրված եզրակացությունը, Վկայականի, իսկ վերաբնակեցման տարածքներում Վկայականի բացակայության դեպքում համայնքի ղեկավարի կողմից տրված համապատասխան տեղեկանքի և անձնագրերի պատճենները:

18. Հողատարածքի նկատմամբ ընդհանուր համատեղ կամ բաժնային սեփականության, վարձակալության, ենթավարձակալության կամ անհատույց օգտագործման իրավունքների առկայության դեպքում հայտատուները Նախարարություն են ներկայացնում նաև սեփականատիրոջ (համասեփականատերերի) գրավոր համաձայնությունը սույն Ծրագրի շրջանակներում աշխատանքների իրականացման համար:

19. Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամաններով Ծրագրի իրականացմանն ուղղված միջոցառումների կատարման համար հողօգտագործողների ներկայացրած հայտերի ուսումնասիրման և իրականացվելիք աշխատանքների հետագա վերահսկման նպատակով ստեղծվում են համապատասխան հանձնաժողովներ (այսուհետ՝ Հանձնաժողով):

20. ***Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիայի տեղադրում՝ համակարգի արժեքի անհատույց և (կամ) անտոկոս փոխառության միջոցով.***

1) պետական աջակցությունը տրամադրվում է հետևյալ չափանիշներով՝

ա. նոր հիմնադրվող և մինչև երեք տարեկան բազմամյա տնկարկների 1 և ավելի հեկտարի չափով մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով: 1 հեկտարի հաշվարկով անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է առավելագույնը 750 000-ական ՀՀ դրամ, իսկ աջակցության գումարի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցով,

բ. ծխախոտի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով: 1 հեկտարի հաշվարկով անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է առավելագույնը 750 000-ական ՀՀ դրամ, իսկ աջակցության գումարի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցով,

գ. երեք ու բարձր տարիքի բազմամյա տնկարկների 1 և ավելի հեկտարի չափով մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում՝ համակարգի ամբողջ արժեքի չափով անտոկոս փոխառության միջոցով: 1 հեկտարի հաշվարկով անտոկոս փոխառության միջոցով տրամադրվում է առավելագույնը 1 500 000 ՀՀ դրամ, իսկ աջակցության գումարի գերազանցող մասի չափով աշխատանքներն իրականացվում են հողօգտագործողների միջոցներով,

դ. բանջարեղենի և միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ անձրևացման համակարգի) տեղադրում՝ համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության կամ ԱՀ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից այդ նպատակով տրամադրված վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման միջոցով: 1 հեկտարի հաշվարկով աջակցության գումարը կազմում է առավելագույնը 750 000 ՀՀ դրամ, իսկ աջակցության գումարի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով,

ե. անձրևացման շարժական և ստացիոնար համակարգերի տեղադրման նպատակով տրամադրվում է համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց աջակցություն՝ բայց ոչ ավել քան 20 000 000 ՀՀ դրամ, և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառություն: Պետական աջակցության գումարի չափը գերազանցելու դեպքում՝ գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով,

զ. 0.5-ից մինչև 1 հեկտարի չափով հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգով նոր հիմնադրվող և մինչև երեք տարեկան բազմամյա տնկարկների մշակության համար ոռոգման կաթիլային համակարգի տեղադրման նպատակով համակարգի արժեքի 70 տոկոսի չափով անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում: Պետական աջակցության գումարի չափը 1 հեկտարի հաշվարկով կազմում

է առավելագույնը 560 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասը տրամադրվում է հողօգտագործողների կողմից,

է. 0.5-ից մինչև 1 հեկտարի չափով հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգով երեք և բարձր տարիքի բազմամյա տնկարկների մշակության համար ոռոգման կաթիլային համակարգի տեղադրման նպատակով համակարգի արժեքի 70 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցների տրամադրում: Պետական աջակցության գումարի չափը 1 հեկտարի հաշվարկով կազմում է առավելագույնը 560 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասը տրամադրվում է հողօգտագործողների կողմից,

ը. 0.5-ից մինչև 1 հեկտարի չափով հողատարածքում տնկարանային տնտեսության մշակության համար ոռոգման կաթիլային համակարգի տեղադրման նպատակով համակարգի արժեքի 70 տոկոսի չափով անհատույց ֆինանսական միջոցների տրամադրում: Պետական աջակցության գումարի չափը 1 հեկտարի հաշվարկով կազմում է առավելագույնը 700 000 ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի մնացած մասը տրամադրվում է հողօգտագործողների կողմից,

թ. 1 և ավելի հեկտարի չափով հողատարածքում տնկարանային տնտեսության մշակության համար ոռոգման կաթիլային համակարգի տեղադրում համակարգի արժեքի 50 տոկոսի չափով անհատույց և 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության միջոցով: 1 հեկտարի հաշվարկով անհատույց և անտոկոս փոխառությամբ տրամադրվում է առավելագույնը 1 000 000-ական ՀՀ դրամ, իսկ համակարգի արժեքի գերազանցող մասի չափով աշխատանքները պետք է իրականացվեն հողօգտագործողների միջոցներով.

2) 0.5-ից մինչև 1 հեկտարի չափով նույն հողատարածքում կամ դրա մասը կազմող հողատարածքում աջակցությունը տրամադրվում է մեկ անգամ.

3) Հանձնաժողովն հայտերի և Արցախի Հանրապետության շրջանների վարչակազմերի կողմից տեղեկությունների ներկայացման պահից քսանօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը, տեղում ճշտում է հողատարածքների մակերեսները, ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրելու հնարավորությունները և պայմանները, տվյալ հողատարածքում ոռոգման ջրի առկայությունը և ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման նպատակահարմարությունը և այդ պահանջները բավարարող հողօգտագործողների համար սահմանում է ժամկետ՝ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների (բացառությամբ շարժական անձրևացման համակարգերի) տեղադրման նախագծանախահաշվային փաստաթղթերը (շարժական անձրևացման համակարգերի դեպքում՝ համակարգի արժեքի մասին հավաստող փաստաթուղթը) (այսուհետ՝ փաստաթղթեր) ներկայացնելու նպատակով: Փաստաթղթերի մեկ փաթեթը կազմվում է մեկ կազմակերպության կողմից.

4) համապատասխան կազմակերպությունների կողմից կազմված և Նախարարություն ներկայացված փաստաթղթերը (բացառությամբ 0.5-ից մինչև 1 հեկտար մակերեսով բազմամյա տնկարկների համար կաթիլային համակարգերի

տեղադրման համար կազմված նախագծանախահաշվային փաստաթղթերի) ենթարկվում են փորձաքննության՝ պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով.

5) 0.5-ից մինչև 1 հեկտար մակերեսով հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգով բազմամյա տնկարկների մշակության դեպքում հողօգտագործողները նախագծանախահաշվային փաստաթղթերի հետ մեկտեղ Նախարարություն են ներկայացնում նաև փորձաքննության արդյունքները.

6) սույն Ծրագրի շրջանակներում ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 1 և ավելի հեկտար բազմամյա տնկարկների, տնկարանային տնտեսությունների մշակությամբ, ինչպես նաև ոռոգման անձրևացման ստացիոնար համակարգերի տեղադրման ցանկություն ունեցող հողօգտագործողների համար Նախարարության կողմից սահմանված ժամկետում ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներ տեղադրող լիցենզավորված ընկերությունները (այսուհետ՝ ընկերություններ) Նախարարություն են ներկայացնում հայտ՝ համաձայն N 5 ձևի.

7) Հանձնաժողովը փորձաքննության, իսկ սույն կետի 5-րդ ենթակետում նշված դեպքում հողօգտագործողների կողմից փորձաքննության ենթարկված նախագծանախահաշվային փաստաթղթերի ուսումնասիրման արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում ընդհանրացնում և տալիս է եզրակացություն, միաժամանակ Նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած՝ ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգով ծխախոտ և ոռոգման կաթիլային համակարգով 0.5-ից մինչև 1 հեկտար մակերեսով հողատարածքում բազմամյա տնկարկներ մշակող հողօգտագործողների ֆինանսավորման մասին՝ նշելով անհատույց տրամադրման ենթակա ֆինանսական միջոցների չափը և տրամադրման պայմանները.

8) Նախարարությունը փորձաքննության արդյունքների հիման վրա տասնօրյա ժամկետում հիմնադրամ է ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը, նշելով՝

ա. ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 0.5-ից մինչև 1 հեկտարի չափով բազմամյա տնկարկների, ծխախոտի, բանջարեղենի և այլ միամյա մշակաբույսերի մշակության մասով՝ անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարը և սուբսիդավորվող վարկի չափն ու պայմանները,

բ. ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով 1 և ավելի հեկտար բազմամյա տնկարկների, տնկարանային տնտեսությունների, ինչպես նաև անձրևացման շարժական և ստացիոնար համակարգերի տեղադրման մասով՝ անհատույց և (կամ) անտոկոս փոխառությամբ տրամադրման ենթակա գումարները.

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված տեղեկությունների հետ միաժամանակ հիմնադրամ է ուղարկվում անտոկոս փոխառությամբ տրամադրված գումարների՝ մշակվող կուլտուրայի յուրահատկություններից կախված, վերադարձման ժամկետների կամ վաղաժամկետ մարման հնարավորության մասին տեղեկություններ՝ պետական աջակցության գործընթացն ապահովելու նպատակով.

10) ծխախոտի, բանջարեղենի և այլ միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրելու նպատակով անտոկոս

փոխառությամբ տրամադրված գումարները ենթակա են վերադարձման մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 1-ը.

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման նպատակով Հիմնադրամի, բանկի կամ վարկային կազմակերպության և հայտատուի միջև կնքվում է պայմանագիր, նախատեսելով սույն կետի 5-րդ ենթակետով սահմանված պայմանները.

11) հիմնադրամը դրական եզրակացություն ստացած՝

ա. սույն կետի 8-րդ ենթակետի «ա» պարբերությունով նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների և (կամ) բանկի կամ վարկային կազմակերպության հետ կնքում է համապատասխանաբար անտոկոս փոխառության պայմանագրեր և (կամ) եռակողմ պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 8-րդ ենթակետի «ա» պարբերությունով սահմանված պայմանները և սույն կետի 8-րդ ենթակետի «բ» պարբերությունով նախատեսված անձրևացման շարժական համակարգեր տեղադրող հողօգտագործողների հետ անտոկոս փոխառության և անհատույց տրամադրման պայմանագրեր ՝ նախատեսելով սույն կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով նախատեսված դրույթները,

բ. սույն կետի 8-րդ ենթակետի «բ» պարբերությունով (անձրևացման ստացիոնար համակարգի մասով) նախատեսված կուլտուրաների մշակությամբ զբաղվող հողօգտագործողների և ընտրված ընկերությունների հետ տասնհինգօրյա ժամկետում կնքում է համապատասխան (եռակողմ) պայմանագրեր՝ նախատեսելով սույն կետի 9-րդ ենթակետով նախատեսված դրույթները.

12) հիմնադրամը սույն կետի 9-րդ և 10-րդ ենթակետերով նախատեսված գումարների լրիվ կամ մասնակի վերադարձման դեպքում՝ ապահովում է դրանց փոխանցումը պետական բյուջե.

13) Նախարարությունը դրական եզրակացություն ստացած սույն կետի 7-րդ ենթակետում նշված կուլտուրաներ մշակող հողօգտագործողների հետ կնքում է ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր՝ նախատեսելով ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների կատարման պայմանները և ժամկետները սահմանող դրույթներ.

14) հիմնադրամը յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, Նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ.

15) ընկերությունների կողմից իրականացրած՝ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների տեղադրման աշխատանքների ընդունումն իրականացվում է հիմնադրամի և Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի հրամանով ստեղծված համապատասխան հանձնաժողովի կողմից.

16) Նախարարությունը հիմք ընդունելով սույն կետի 14-րդ ենթակետում նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով օբյեկտի շինմոնտաժային աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով.

17) ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանց արժեքները ենթակա են վերադարձման, ընդ որում՝ անտոկոս փոխառության մասով՝ վաղաժամկետ.

18) հիմնադրամը, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո, բայց ոչ ուշ քան մինչև եռամսյակին հաջորդող ամսվա 10-ը, Նախարարություն է ներկայացնում տեղեկություններ՝ տրամադրված և վերադարձված ու պետական բյուջե փոխանցված գումարների մասին.

19) ոռոգման կաթիլային, ենթահողային և շիթային համակարգերով բանջարեղենի և այլ միամյա մշակաբույսերի մշակության համար ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաների արժեքի 50 տոկոսի չափով անտոկոս փոխառության տրամադրումն իրականացվում է հիմնադրամի միջոցներով:

***21. Արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքների արժեքի մասնակի սուբսիդավորում***.

1) սուբսիդավորման պարտադիր պայման է հանդիսանում նվազագույնը 20 հեկտար բազմամյա տնկարկների՝ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներով ոռոգման նպատակով հայտի (այդ թվում՝ կոլեկտիվ հայտի) ներկայացումը.

2) պետության կողմից անհատույց տրամադրվում է՝

ա) 60-ից մինչև 100 մետր խորությամբ արտեզյան խորքային հորերի կառուցման համար՝

- համակարգի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին անցնելու դեպքում՝ ԱՀ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից այդ նպատակով տրամադրված վարկի տոկոսադրույքի արժեքը:

Վարկի չափը կազմում է համակարգի արժեքի 100 տոկոսը, բայց ոչ ավել քան 20 000 000 ՀՀ դրամ, որը գերազանցելու դեպքում գերազանցող մասի չափով աշխատանքներն իրականցվում են հայտատուների հաշվին.

- համակարգի նկատմամբ գույքային իրավունքները 100 տոկոս պետական բաժնետոմսերով՝ ոռոգման ջուր մատակարարող ընկերությանն (այսուհետ՝ ջրամատակարար ընկերություն) անցնելու դեպքում՝ արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքների նախահաշվային արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավել քան 10 000 000 ՀՀ դրամ: Նախահաշվային արժեքի մյուս 50 տոկոսը և համակարգի արժեքը պետական աջակցության գումարը գերազանցելու դեպքում աշխատանքներն իրականացվում են հայտատուների հաշվին,

բ) 100-ից մինչև 125 մետր խորությամբ արտեզյան խորքային հորերի կառուցման համար՝

- համակարգի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին անցնելու դեպքում՝ ԱՀ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից այդ նպատակով տրամադրված վարկի տոկոսադրույքի արժեքը:

Վարկի չափը կազմում է համակարգի արժեքի 100 տոկոսը, բայց ոչ ավել քան 25 000 000 ՀՀ դրամ, որը գերազանցելու դեպքում գերազանցող մասի չափով աշխատանքներն իրականցվում են հայտատուների հաշվին.

- համակարգի նկատմամբ գույքային իրավունքները ջրամատակարար ընկերությանն անցնելու դեպքում՝ արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքների նախահաշվային արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավել քան 12 500 000 ՀՀ դրամ: Նախահաշվային արժեքի մյուս 50 տոկոսը և համակարգի արժեքը պետական աջակցության գումարը գերազանցելու դեպքում աշխատանքներն իրականացվում են հայտատուների հաշվին,

գ) 125-ից մինչև 150 մետր խորությամբ արտեզյան խորքային հորերի կառուցման համար՝

- համակարգի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին անցնելու դեպքում՝ ԱՀ բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից այդ նպատակով տրամադրված վարկի տոկոսադրույքի արժեքը:

Վարկի չափը կազմում է համակարգի արժեքի 100 տոկոսը, բայց ոչ ավել քան 30 000 000 ՀՀ դրամ, որը գերազանցելու դեպքում գերազանցող մասի չափով աշխատանքներն իրականցվում են հայտատուների հաշվին.

- համակարգի նկատմամբ գույքային իրավունքները ջրամատակարար ընկերությանն անցնելու դեպքում՝ արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքների նախահաշվային արժեքի 50 տոկոսը, բայց ոչ ավել քան 15 000 000 ՀՀ դրամ: Նախահաշվային արժեքի մյուս 50 տոկոսը և համակարգի արժեքը պետական աջակցության գումարը գերազանցելու դեպքում աշխատանքներն իրականացվում են հայտատուների հաշվին:

Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումն իրականացվում է արտեզյան խորքային հորի կառուցման աշխատանքներն ավարտելուց, իսկ նոր հիմնադրվող այգու դեպքում՝ նաև տունկը կատարելուց հետո՝ վարկի մինչև 7 տարի մարման ժամանակահատվածի համար.

3) Հանձնաժողովը սույն Ծրագրի 16-րդ կետով նախատեսված հայտերը ստանալուց հետո մեկամսյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը և՝

ա) նախատեսվող համակարգի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին անցնելու դեպքում Նախարարություն ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը,

բ) համակարգի նկատմամբ գույքային իրավունքները ջրամատակարար ընկերությանը անցնելու դեպքում վերջինիս ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը՝ արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքները կազմակերպելու համար.

4) սույն կետի 3-րդ ենթակետի «ա» պարբերությամբ նախատեսված՝ դրական եզրակացություն ստացած հայտատուները Նախարարության կողմից սահմանված ժամկետներում և պայմաններով Նախարարություն են ներկայացնում արտեզյան խորքային հորերի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը, փորձաքննության արդյունքները և օրենքով սահմանված կարգով ձեռքբերված շինարարության թույլտվությունները.

5) հանձնաժողովը սույն կետի 4-րդ ենթակետով նախատեսված փաստաթղթերը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում ուսումնասիրում և տալիս է եզրակացություն, միաժամանակ Հիմնադրամ ներկայացնելով առաջարկություն դրական եզրակացություն ստացած հայտատուների սուբսիդավորվող վարկի չափի և պայմանների մասին.

6) Վարկի տոկոսադրույքի սուբսիդավորման նպատակով Հիմնադրամի, բանկի կամ վարկային կազմակերպության և հայտատուի միջև կնքվում է պայմանագիր, նախատեսելով սույն կետի 5-րդ ենթակետով սահմանված պայմանները.

7) ջրամատակարար ընկերությունը՝

ա) Հանձնաժողովի կողմից ներկայացված ցանկի հիման վրա մեկամսյա ժամկետում հայտատուների և կապալառուների հետ կնքում է համապատասխան եռակողմ պայմանագրեր՝ նախատեսելով արտեզյան խորքային հորի կառուցման համար անհրաժեշտ նախնական հորատման և անհրաժեշտ ջրթողունակության դեպքում նաև կառուցման ժամկետները և ֆինանսավորման չափերը (ֆինանսավորումը իրականացվում է համաձայն նախագծանախահաշվային փաստաթղթերի՝ համապատասխան ջրթողունակության բացակայության դեպքում, հորատման համար նախատեսված գումարի 50 տոկոսի չափով կապալառուի, 25 տոկոսի չափով հայտատուի և 25 տոկոսի չափով ջրամատակարար ընկերության կողմից, իսկ անհրաժեշտ ջրթողունակության դեպքում՝ սույն կետի 2-րդ ենթակետով նախատեսված պայմաններով),

բ) արտեզյան խորքային հորի հորատման պահից սկսած՝ նոր հիմնադրվող այգու դեպքում նաև տունկը կատարելուց հետո 15 տարի շարունակ առաջնահերթության կարգով ոռոգման ջուրը, ընդհանուր հիմունքներով մատակարարում է տվյալ հայտատուին (հայտատուներին), իսկ ոռոգման ջրի ավելցուկի դեպքում նաև այլ հողօգտագործողների,

դ) յուրաքանչյուր ամիս, մինչև տվյալ ամսվան հաջորդող ամսվա 10-ը, Նախարարություն է ներկայացնում տեղեկություններ իրականացրած աշխատանքների վերաբերյալ.

8) Նախարարությունը հիմք ընդունելով սույն կետի 7-րդ ենթակետի «դ» պարբերությամբ նշված տեղեկությունները՝ կազմակերպում է մասնագիտական որակավորում ունեցող անձի կողմից պայմանագրային հիմունքներով շինարարության տեխնիկական հսկողության ծառայության մատուցումը՝ պետական բյուջեով նախատեսված միջոցներով, իսկ արտեզյան խորքային հորի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին մնալու դեպքում՝ տեխնիկական հսկողությունն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ կառուցապատողի կողմից.

9) արտեզյան խորքային հորերի կառուցման աշխատանքներն իրականացվում են հիդրոտեխնիկական լիցենզիա ունեցող ընկերությունների միջոցով՝ ներկայացված նախագծանախահաշվային փաստաթղթերին համապատասխան:

10) արտեզյան խորքային հորերի ոչ նպատակային օգտագործման դեպքում՝

1) համակարգի նկատմամբ գույքային իրավունքները հայտատուին անցնելու դեպքում դադարեցվում է վարկի տոկոսադրույքի սուբսիդավորումը,

2) համակարգի նկատմամբ գույքային իրավունքները ջրամատակարար ընկերությանը անցնելու դեպքում հայտատուն զրկվում է մատակարարվող ոռոգման ջրի նկատմամբ ունեցած առաջնահերթությունից:

***22. Ցանկապատված պոլիէթիլենային հիդրոմեկուսիչ ծածկոցով ջրավազանների (այսուհետ՝ ջրավազան) կառուցման աշխատանքների արժեքի մասնակի սուբսիդավորում.***

1) սուբսիդավորման պարտադիր պայման է հանդիսանում նվազագույնը 10 հեկտար բազմամյա տնկարկների՝ ոռոգման ժամանակակից տեխնոլոգիաներով ոռոգման նպատակով, 500-ից մինչև 1 000 խորանարդ մետր ծավալով ջրավազանների կառուցման նպատակով հայտի ներկայացումը, նոր հիմնադրվող բազմամյա տնկարկների դեպքում՝ նաև տունկը կատարված լինելը.

2) պետության կողմից անհատույց տրամադրվում է ջրավազանի 1 խորանարդ մետրի դիմաց առավելագույնը 5 000 ՀՀ դրամ, բայց ոչ ավել քան 5 000 000 ՀՀ դրամ.

3) հանձնաժողովը սույն Ծրագրի 17-րդ կետով նախատեսված հայտերը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում ստուգում է ներկայացված փաստաթղթերի հավաստիությունը և Նախարարություն ներկայացնում դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ցանկը.

4) դրական եզրակացություն ստացած հայտատուները Նախարարության կողմից սահմանված ժամկետներում և պայմաններով Նախարարություն են ներկայացնում ջրավազանի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերը, փորձաքննության արդյունքները և օրենքով սահմանված կարգով ձեռքբերված շինարարության թույլտվությունները.

5) հանձնաժողովը նախագծանախահաշվային փաստաթղթերը ստանալուց հետո տասնհինգօրյա ժամկետում ուսումնասիրում և տալիս է եզրակացություն, միաժամանակ Նախարարություն ներկայացնելով առաջարկություն՝ դրական եզրակացություն ստացած հողօգտագործողների ֆինանսավորման պայմանների, չափի և կառուցման ժամկետների վերաբերյալ՝ ֆինանսական միջոցների անհատույց տրամադրման պայմանագրեր կնքելու նպատակով.

6) Շինարարական աշխատանքներն իրականացվում են հիդրոտեխնիկական լիցենզիա ունեցող ընկերության միջոցով՝ անցնելով օրենքով սահմանված տեխնիկական հսկողություն.

7) ջրավազանների ոչ նպատակային օգտագործման դեպքում դրանց կառուցման համար տրամադրված պետական աջակցության գումարը 7 տարվա ընթացքում ենթակա է վերադարձման պետական բյուջե:

23. Սույն Ծրագրի ֆինանսավորումն իրականացվում է յուրաքանչյուր տարվա պետական բյուջեով այդ նպատակով նախատեսված միջոցներով:

## *IV. ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ*

24. Սույն Ծրագրի իրականացումից ակնկալվող արդյունքներն են՝

*1)* անցում ինտենսիվ գյուղատնտեսության.

*2)* ոռոգման ջրի տնտեսում, ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործում.

*3)* նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացում.

*4)* գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացում և ստացվող բերքի որակի բարձրացում.

*5)* մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազեցում:

***Ձև N 1***

***Արցախի Հանրապետության _____ շրջանի***

***_____ համայնքի ղեկավարին***

***(վարչակազմի ղեկավարին)***

*ՀԱՅՏ*

Դիմող _____

(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը),

հեռախոսահամարը _____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ

հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

Պետական գրանցման վկայականի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Նախատեսվող աջակցության տեսակը_____

_____

Մշակվող կուլտուրայի տեսակը_____

Մշակվող հողատարածքի մակերեսը_____

Հայտին կից ներկայացվում են՝

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____

_____

_____

_____ _____

(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

***Ձև N 2***

***Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն***

ՀԱՅՏ

Դիմող _____

(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը),

հեռախոսահամարը _____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ

հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

Պետական գրանցման վկայականի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Նախատեսվում է ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրել _____ հա

_____ համար

(մշակվող կուլտուրայի տարիքը, տեսակը)

_____

Ոռոգման ժամանակակից տեխնոլոգիա տեղադրող

ընկերությունը_____

Հայտին կից ներկայացվում են՝

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____

_____

_____

_____ _____

(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

***Ձև N 3***

***Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն***

*ՀԱՅՏ*

Դիմող (դիմողներ) _____

(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

_____

_____

_____

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը),
հեռախոսահամարը _____

_____

_____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ
հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

_____

_____

Գործունեության իրականացման վայրը _____

Մշակվող կուլտուրայի տեսակը_____

Մշակվող հողատարածքի մակերեսը_____

Արտեզյան հորի տեխնիկական ցուցանիշները_____

Արտեզյան խորքային հորի պատկանելությունը_____

Հայտին կից ներկայացվում են՝

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____

_____

_____

_____ _____

(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

***Ձև N 4***

***Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն***

*ՀԱՅՏ*

Դիմող _____

(ֆիզիկական և իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր)

_____

Բնակության վայրը (գտնվելու վայրը),

հեռախոսահամարը _____

Անձնագրի և սոցիալական քարտի կամ

հանրային ծառայությունների համարանիշի համարը _____

Գործունեության իրականացման վայրը _____

Մշակվող կուլտուրայի տեսակը_____

Մշակվող հողատարածքի մակերեսը_____

Ջրավազանի տեխնիկական ցուցանիշները_____

Հայտին կից ներկայացվում են՝

1._____

2._____

3._____

4._____

5._____

6._____

Լրացուցիչ տեղեկություններ_____

_____

_____

_____ _____

(անուն,ազգանուն) (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

***Ձև N 5***

***Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն***

ՀԱՅՏ

Ոռոգման կաթիլային, շիթային ենթահողային կամ անձրևացման ստացիոնար համակարգերի ներդրման աշխատանքների մասնակցության

_____ ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) պատրաստակամություն է հայտնում մասնակցելու ԱՀ կառավարության 202__ թվականի _____ __-ի N ___-Ն որոշմամբ հաստատված «Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագրի» շրջանակներում իրականացվելիք՝ ոռոգման կաթիլային, շիթային կամ ենթահողային համակարգերի տեղադրման աշխատանքներին:

*Միաժամանակ հայտարարում եմ, որ՝*

- մեկ միավոր հողատարածքում ոռոգման կաթիլային համակարգի տեղադրումն կիրականացվի Ընկերության կողմից,
- համակարգի տեղադրումից հետո առնվազն մեկ տարվա ընթացքում համակարգի շահագործման վերաբերյալ մասնագիտական խորհրդատվության տրամադրումը և ծխախոտի դեպքում՝ առնվազն մեկ, իսկ բազմամյա տնկարկների դեպքում՝ առնվազն երեք տարվա ընթացքում երաշխիքային սպասարկումն իրականացնում է Ընկերության կողմից.

Ներկայացնում եմ լրացուցիչ փաստաթղթեր՝ Ընկերության գործունեության և կատարած աշխատանքների մասին *(ոչ պարտադիր դրույթ)*:

Հավաստիացնում եմ, որ սույն հայտով ներկայացված տեղեկատվությունն արժանահավատ է և ամբողջական: Գիտակցում եմ, որ որևէ կեղծ փաստաթուղթ կամ տեղեկատվություն ներկայացնելը հանգեցնում է օրենքով սահմանված պատասխանատվության:

Պարտավորվում եմ ներկայացված տեղեկատվության որևիցե փոփոխության դեպքում այդ մասին տեղեկացնել Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությանը:

Կից ներկայացնում եմ լիցենզիայի պատճենը:

Ստորագրող՝

_____ (պաշտոնը)

_____ (անունը, ազգանունը)

_____ (ստորագրությունը)

«____» _____ 20___ թ.

***ԱՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏ*** ***Ա. ԼԱԶԱՐՅԱՆ***

***ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ***

***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ***

***<u>Անհրաժեշտությունը</u>***

Սույն նախագծի ներկայացումը պայմանավորված է Արցախի Հանրապետության շրջաններում տարբեր կուլտուրաների ցանքատարածությունների ու համախառն բերքի

ծավալների ավելացման, գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտների եկամտաբերության մակարդակի բարձրացման անհրաժեշտությամբ:

***<u>Ընթացիկ իրավիճակը և խնդիրները</u>***

Որոշման նախագծի խնդիրը գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության բարձրացման, ոռոգման ջրի և ոռոգելի հողատարածքների արդյունավետ օգտագործման ապահովման նպատակով ոռոգման գործընթացի ճիշտ կազմակերպումը, ջրման նոր տեխնոլոգիաների ներդրումը և ավտոմատ կառավարման համակարգերի ստեղծումն ապահովելն է:

***<u>Նպատակը և բնույթը</u>***

Ծրագրով նախատեսվում է ջրախնայողական տեխնոլոգիաների ներդրում, ջրային ռեսուրսների արդյունավետ և խնայողաբար օգտագործում, նվազ ջրային ռեսուրսների պայմաններում ոռոգովի հողատարածքների ավելացում, բազմամյա մշակաբույսերի մշակման խթանում, նոր կուլտուրաների ներդրման աջակցություն, անցում ինտենսիվ գյուղատնտեսության:

***<u>Ակնկալվող արդյունքը</u>***

Ծրագրի իրականացումից ակնկալվում է Արցախի Հանրապետությունում 30-60 տոկոսով ոռոգման ջրի տնտեսում, 20-50 տոկոսով գյուղատնտեսական մշակաբույսերի բերքատվության ավելացում և ստացվող բերքի որակի բարձրացում, մոլախոտային բուսականության, հիվանդությունների և վնասատուների դեմ պայքարի անհրաժեշտության նվազում:

***<u>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված անձինք</u>***

Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչության և իրավաբանական բաժինների կողմից:

***<u>Ակտի նորմատիվ բնույթի հիմնավորվածությունը</u>***

Սույն նախագիծը համարվում է նորմատիվ, քանի որ պարունակում է վարքագծի կանոններ անորոշ թվով անձանց համար:

***<u>Այլ տեղեկություններ</u>***

«Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը սահմանված կարգով դրվել է հանրային քննարկման Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության պաշտոնական կայքէջում: Սահմանված ժամկետներում առաջարկություններ կամ դիտողություններ չեն ստացվել:

ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐ Ա. ԲԱԽՇԻՅԱՆ

# ՏԵՂԵԿԱՆՔ

## «ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՈՒՄՆԵՐԻ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության

կառավարության որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Արցախի Հանրապետության պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների ավելացումներ կամ նվազեցումներ չեն նախատեսվում:

***ՏԵՂԵԿԱՆՔ***
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ***

«Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջացնում:

***ԱՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ***
***ՆԱԽԱՐԱՐ*** ***Ա. ԲԱԽՇԻՅԱՆ***

***ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ***
***«ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՈՌՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ***

«Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին» Արցախի Հանրապետության կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չկան:

*ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ*
*ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ*
*ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ*

*Լ. ԱՌՈՒՇԱՆՅԱՆ*

## *ԱՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՔՄԱՆ ԹԵՐԹԻԿ*

***Որոշման նախագծի անվանումը՝***

«Արցախի Հանրապետությունում ոռոգման նպատակով հողօգտագործողներին աջակցման ծրագիրը հաստատելու մասին»

***Նախագիծը ներկայացնողը՝***

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

***ԱՀ կառավարության որոշումն ուղարկել՝***

1. ԱՀ գյուղատնտեսության նախարարություն
2. ԱՀ արդարադատության նախարարություն
3. ԱՀ ֆինանսների նախարարություն
4. ԱՀ բնապահպանության կոմիտե
5. ԱՀ գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամ
6. ԱՀ շրջանների վարչակազմեր

***Նախագիծը պատրաստողը՝***

Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի ջրային համակարգերի օգտագործման և պահպանության պետական տեսչություն

_____ ***Ա. Ներսիսյան***

(ստորագրությունը)

«____» _____ 2020 թ.